«Գորբաչովի դիրքը ոչ պրոադրբեջանական է, ոչ հակահայկական, այն պրոմիութենական է».

ասում է Տեր-Պետրոսյանը ֆրանսիական «Էքսպրես» հանդեսին

«ԽՍՀՄ-ում քաղաքական պրոբլեմները քաղաքական վերաբերմունքի չեն արժանանում», Հռոմի պապի նվիրակ Կոլասուոնոյի ականջին փսփսում է Հայաստանի արտգործնախարարի պաշտոնակատար Ա. Եղիազարյանը: Խորհրդային հանրապետություններից ամենափոքրը իր վերջին նահատակներին է հողին հանձնում, որոնք վոհ գնացին խորհրդային անօրինակ բռնություններին:

1990 թ. օգոստոսին ժողովրդավարական ուժերի իշխանության գալուց հետո, Գորբաչովը նրանց մենակ թողեց, որպեսզի գլուխ հանեն վինյալ խմբերից: Չկան այլեւս մասնագիտացված ու վինվորական պաշտպանիչ համազգեստով ֆիդայինները, որ 1989-90 թ. ծմեռն իրենց հին հրացաններով պաշտպանում էին սահմանները: Սրանց մի մասը մտավ երկրապահ ջոկատների շարքը: Ընդամենը 3 հազար 300 հոգի են հաշվվում այստեղ, որ կրում են կարգուկանոնն ու օրինականությունը հսկող խորհրդային ուժերի համազգեստը: Արտաքնապես ոչինչ չես կարող ասել սրա դեմ: Այդ դեպքում ինչո՞ւ կարմիր բանակը ավերի «միլիցիայի»՝ հաջակավոր ՕՄՈՆ-ի աջակցությամբ հանկարծ սկսեց ուժով վինաթափել նույն բնույթի հայկական միավորումներին:

Սա «նվեր» էր Ադրբեջանի կոմունիստների առաջնորդ Այազ Մութալիբովին, որն ստորագրել է Միութենական նոր պայմանագիր, մինչդեռ հայկական խորհրդարանը ձեռք է վարկել օրինական ճանապարհով դուրս գալ Միությունից, բայց [illegible]ում են [illegible]անում բոլորը: Սա վեճի հիմնական կետը. անկախությունը: «Գորբաչովի դիրքը ոչ պրոադրբեջանական է, ոչ հակահայկական, այն պրոմիութենական է եւ հակաանկախական», ասում է «Էքսպրես»-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը: Մահակն այսօր Հայաստանի վրա է իջել: Վաղն այն խորհրդային լծից մի այլ ազատվել փորձվողի վրա կիջնի»: Սա հետախուզական հարված է, ստուգելու համար անկախականների վճռականության չափը: «Եթե սպառնալիքի այս փորձերից որեւէ մեկը նպատակին հասնի, Գորբաչովը կծանրացնի հաջորդը: Իրական իշխանությունը փախչում է նրա ձեռքից, տրամաբանորեն՝ լոկ բռնատիրության ճանապարհն է մնում բաց, շարունակում է Տեր-Պետրոսյանը: Բանակն ու ՊԱԿ-ը դարձել են նրա գործողության միակ միջոցը»: «Իսկ պերեստրոյկա՞ն»: «Զուտ անախրոնիզմ է: Գորբաչովը չի կարողանում ճզմել իր իսկ սկսած շարժումը»:

Մոսկվայի կամայականությունների հանդեպ՝ ժողովրդավարները խտացնում են իրենց շարքերը: Հետաքննող բազմաթիվ հանձնաժողովներ՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի խորհրդարաններից, Մոսկվայի քաղաքապետությունից, ժամանել են Հայաստանի սահմանային գյուղերը, պարզելու համար, թե բանակը ինչ մակարդակով է մասնակցել վերջին օրերի արյունոտ իրադարձություններին:

Ինչ վերաբերում է հայկական բանակ ունենալու ցավոտ հարցին, Տեր-Պետրոսյանը ճշտում է. «Կարեւոր չէ անունը: Կարեւորը, որ մեր ջահելները ծառայեն մեզ մոտ, ներառյալ նաեւ՝ կարմիր բանակի կազմում: Մենք գիտակցում ենք ԽՍՀՄ ստրատեգիական շահերն այս շրջանում եւ կարող ենք համաձայնվել, որ նրա բազաները լինեն մեր հողի վրա, պայմանավ, որ դա կատարվի մեր կառավարության հետ փոխհամաձայնությամբ»:

Եթե, այսուհետ, օրինականության հանդեպ հարգանքը հարուցում է բռնություն, նշանակում է ամեն ինչ տակնուվրա է եղել: Տեր-Պետրոսյանը պատրաստվում է այդ փաստարկումը ներկայացնել Ֆրանսուա Միտերանին, որը մայիսի 22-ին ընդունում է նրան Փարիզում:

ՈՒՐՍՈՒԼԱ ԳՈԹԻԵ

«Էքսպրես», 16-22 մայիս, 1991

Ծաղրանկարը՝ Ս. ԹՈՐՈՍՅԱՆԻ